



ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ձ. Ս. ԹՈՔՄԱՋՅԱՆ

Հետխորհրդային երկրներում ինստիտուցիոնալ ժողովրդավարացման հիմնախնդիրը առաջնահերթ կարևորություն ստացավ: Տոտալիտար վարչակարգի ժամանակ գոյություն ունեին ինստիտուտներ, որոնք բավարարում էին հասարակության նվազագույն պահանջմունքները (բնակարանային, անհատի տարրական իրավունքների իրականացման, կրթության, առողջապահության և այլն): Սոցիալական փոխակերպումների արագ գործընթացը էական փոփոխություններ մտցրեց սոցիալական ինստիտուտների համակարգում: Նախկին ինստիտուտները այլևս ի վիճակի չէին սպասարկելու նոր հասարակական պահանջմունքները, բայց շարունակում էին գործել՝ ըստ էության նախորդելով նոր ինստիտուտների ստեղծման գործընթացին:

Ջարգացման ժողովրդավարական ուղին ընտրած Հայաստանում սոցիալական ինստիտուտների փոխակերպման գործընթացների արդյունավետ կարգավորումը ենթադրում է հանրապետությունում ստեղծված սոցիալական, տնտեսական և քաղաքական իրավիճակի խոր ուսումնասիրություն: Այդ իմաստով ծագում է էմպիրիկ սոցիոլոգիական հետազոտությունների անհրաժեշտություն, որը թույլ կտա հետևել այդ գործընթացների դինամիկային, վեր հանել ինստիտուցիոնալ ժողովրդավարացմանը խոչընդոտող հակասությունները, ինչպես նաև մշակել սոցիալական տեխնոլոգիաներ, որոնք կոչված են արագացնելու այդ գործընթացները:

Տոտալիտար հասարակությունից ժողովրդավարականին անցման շրջանում Հայաստանում ինստիտուցիոնալ ժողովրդավարացման հիմնախնդիրների բացահայտման նպատակով մենք անցկացրել ենք սոցիոլոգիական հետազոտություններ: Մի կողմից՝ ժողովրդավարական բարեփոխումներն ուսումնասիրվել են որպես վերևից կառավարվող¹, մյուս կողմից՝ որպես ինքնաբերաբար, ինքնակազմակերպվող, ինքնակառավարվող գործընթաց²:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքները՝ կարելի է ասել, որ ժողովրդավարության անցման շրջանում սոցիալական ինստիտուտների ժողովրդավարացման գործընթացների արդյունավետ կարգավորումը ենթադրում է բարեփոխման շահագրգիռ սուբյեկտի առկայություն: Ինչքան ծանրակշիռ է ինստիտուտների բարեփոխման ընթացքում կարգավորող բաղադրիչը, այնքան մեծ է իրական հաջողությունների հասնելու հավանականությունը: Կարգավորող գործոնի բացակայությունը նշանակում է, որ բարեփոխման գործընթացն ընթանում է ինքնաբերաբար, այսինքն՝ այն դատապարտված է անցնելու անորոշ երկար ուղի:

¹ Կարգավորելի գործընթացների ուսումնասիրման նպատակով անցկացվել է ընտրությունների ինստիտուտի հետազոտություն, որը ներառել է 77 ԱԺ-ի պետսիրավական հարցերի համեմատողիկ մշակած ընտրությունների մասին օրենքի նոր նախագծի և գործող օրենքի համեմատական վերլուծությունը: Հետազոտության մանրամասն վերլուծությունը տես՝ Յ. Ս. ԹՈՔՄԱՋՅԱՆ, "Новый закон о выборах в контексте демократических перемен в Армении" (*Պեճի ազատ և արդար ընտրություններ, հողվ. ժող.*, Երևան, 1997, էջ 73-84):

² Ինստիտուցիոնալ ժողովրդավարացման տարերային գործընթացների ուսումնասիրման նպատակով հայկական արհմիությունների օրինակով անցկացվել է սոցիալ-ախտորոշիչ հետազոտություն, որը ընդգրկել է իրազեկության, տեղեկացվածության և արհմիությունների հետ անմիջական կապի չափանիշներով ընտրված փորձագետների հետ 22 խորացված հարցազրույց: Տես՝ Ձ. Ս. ԹՈՔՄԱՋՅԱՆ, Հասարակության ժողովրդավարացումը իբրև սոցիալական ինստիտուտների նպատակամետ բարեփոխումների գործընթաց, «Պետական ծառայողի լրատու», Երևան, 1997, N 5, էջ 40-46:

Հայաստանում սոցիալական ինստիտուտների ժողովրդավարացումը ենթադրում է իշխանության ճյուղերի միջև, գործառույթների վերաբաշխման գործընթացի ավարտ, նոր սոցիալական կառուցվածքների ստեղծում, որոնք անհրաժեշտ են ժողովրդավարության հիմնական սկզբունքների կայացման համար: Կարևորագույն հարցերից է իշխանական կառույցների հակակաշիռների ստեղծման հարցը՝ ի դեմս քաղաքացիների իրավունքները պաշտպանող ոչ կառավարական կազմակերպությունների և ինստիտուտների:

Իսկ ի՞նչ խոչընդոտներ կան... Ինչպես ցույց են տվել հետազոտությունները, Հայաստանում հասարակական կազմակերպությունների ինստիտուտը շատ թույլ է ձևավորված, իսկ նրա լինելիության և զարգացման գործընթացն ընթանում է ծայրաստիճան ինքնաբերաբար և հակասական: Դա կաթվածահար է անում, իսկ լավագույն դեպքում զգալիորեն դանդաղեցնում և թուլացնում է սոցիալական շարժումը հանուն ժողովրդավարական բարեփոխումների:

Վերափոխումների գործընթացում առավել բարդը, թերևս, իշխանությունը կողմերի հետ կոնֆլիկտի հարթահարումն է: Խիստ էական է թվում հմտությունների մշակումը, կոնֆլիկտներն օգտագործելու կարողությունների ուսուցանումը՝ հանուն ժողովրդավարական բարեփոխումների հետագա խորացման և հասարակության առջև դրված նպատակների իրականացման: Անհրաժեշտ է այդ դինամիկ բաղադրիչը դիտարկել որպես հասարակության զարգացման աղբյուր, այսինքն՝ այդ կոնֆլիկտներին տալ քաղաքակիրթ ձևեր և դրանով իսկ առավելագույնս թուլացնել դրանց ապակառուցողական հետևանքները: Եթե քաղաքականության խնդիրը իշխանության համար պայքարող խմբերի կոնֆլիկտներն են, ապա ժողովրդավարությունը կարելի է համարել համաձայնությունների (կոմպրոմիսների) արվեստ:

Այսօր Հայաստանում ցածր է անմիջականորեն համաձայնության հասնելու հավանականությունը, սակայն շրջանցիկ ճանապարհով այն կարող է լինել բավական բարձր: Սոցիալական զարգացման արդի փուլը համառորեն թելադրում է հանրապետությունում նոր սոցիալական տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությունը: Գոյություն ունեցող ձևական իշխանությունից դուրս նոր կառուցվածք է երկխոսությունը, որը ընթացակարգորեն կողմնորոշված է դեպի մեղմ ու սահուն տեխնոլոգիաների մասնագիտական ներդրումը: Այն կոչված է մուտք բացելու վարչական կարևոր որոշումների ընդունման գործընթացի վրա անկախ և ընդդիմադիր ուժերի ազդեցության համար: Փորձառու մասնագետ սոցիոլոգների ներգրավմամբ երկխոսության կենտրոնների ստեղծման խնդիրը այսօր հույժ հրատապ է: Համանման քննարկումների կազմակերպման ձեռնարկված փորձերը հաստատեցին դրանց արդյունավետությունը և նպատակահարմարությունը³:

Ինստիտուտների ժողովրդավարացման վերաբերյալ ընդունված որոշումները կարող են հաջող լինել, եթե դրանք նպաստում են սոցիալական սուբյեկտների, սոցիալական հանրույթների, քաղաքական, տնտեսական և այլ կազմակերպությունների ազատության աճին: Այս առումով Հայաստանի օրենսդրական մարմինները լուրջ անելիքներ ունեն: Մյուս կողմից՝ որոշումների և գործողությունների արդյունավետությունը կախված է նրանց իրականացման յուրաքանչյուր փուլում պրակտիկ գործողությունների գլխավոր օղակի ճիշտ ընտրությունից:

Արագ փոփոխվող և անցյալում նման օրինակներ չունեցող քաղաքական միջավայրն այսօր մի սերնդից մյուսին արժեքների փոխանցման ժամանակ ստեղծում է ար-

³ Հայաստանում ընտրությունների ինստիտուտի ուսումնասիրման նպատակով նախապես անցկացված սոցիոլոգիական հետազոտությունից հետո Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի բազայի վրա 1997-1998 թթ. ստեղծվեց երկխոսության կենտրոն: Կենտրոնի նպատակն էր օգնել բանավեճի մասնակիցներին՝ չնայած նրանց միջև գոյություն ունեցող լուրջ տարածայնություններին, գտնելու հասարակության ժողովրդավարացման հանգուցային հարցերի վերաբերյալ փոխընդունելի լուծումներ:

գելքներ և չի նպաստում սերունդների փոխըմբռնմանը, որը հանգեցնում է քաղաքական սոցիալականացման ճգնաժամի: Ծագում է քաղաքական սոցիալականացման ինստիտուտի բարեփոխման անհրաժեշտություն, որն իր հերթին նշանակում է քաղաքացիների քաղաքական մասնակցության չափի և սահմանի որոշում, քաղաքական ավանդույթների, քաղաքական պրակտիկայի նորմերի, գաղափարների տարբեր հասարակական-քաղաքական ինստիտուտների միջև փոխհարաբերությունների վերաբերյալ համոզմունքների ձևավորում, այսինքն՝ առաջիկայում պետք է ձևավորել արժեքա-նորմացուցային համակարգ, որը ընդունվում է որպես քաղաքական սուբյեկտ հանդես եկող բնակչության մեծամասնության կողմից: Գոյություն ունեցող իշխանության օրինականության ապահովումը հիմնավորման ձև է, որը կոչված է ամբողջացնել-միասնականացնել անջատ ինստիտուցիոնալ գործընթացները: Այդ բոլորի մեջ որոշակի դրական դեր կարող է խաղալ նաև քաղաքական սոցիալականացման արևմտյան հայեցակարգերի ուսումնասիրումն ու իմաստավորումը: Սակայն, անհրաժեշտ է նախնական վարկածի տեսքով ունենալ այդ գործընթացի զարգացման սեփական մոդելը, որը ենթադրում է քաղաքականության մեջ անհատի ներգրավման բազմաստիճան մեխանիզմ:

Ժողովրդավարության արևմտյան մոդելները մեր իրականության մեջ կիրառելու՝ հանրապետությունում նկատվող միտումը դժվար թե հանգեցնի դրական արդյունքի: Այդ մոդելների մեխանիզմների հիմքում ընկած նորմերի և սկզբունքների՝ առաջին հայացքից աննշան թվացող անհամապատասխանությունները մեր հասարակության մշակութային, տնտեսական և քաղաքական առանձնահատկություններին, սոցիալական իրականության վրա դրանց անմիջական պրոյեկտման դեպքում կարող են հանգեցնել լուրջ հակասությունների: Մշակույթի այլ համակարգի պայմաններում այդ մեխանիզմները կդառնան անընդունելի: Այդ պատճառով էլ դրանց նախասկզբնական տեսքով օգտագործելու բոլոր փորձերը խոչընդոտում են հանրապետությունում ինստիտուցիոնալ ժողովրդավարացման գործընթացները՝ լինեն դրանք կառավարելի, թե՛ ինքնաբերական: Ինչպես գրում է Ջոն Գելլոուելը, «...քաղաքական հիմնախնդիրները նման չեն երկրաչափության հիմնախնդիրներին: Հավասար չափով մենք չենք կարող ձեռնամուխ լինել հասարակական կարգի շինարարությանը՝ ելնելով ապրիորի բացթողումների հավաքածուից: Նյութերը, որոնց հետ վիճակված է աշխատելու պետական գործչին, խաղաքարտեր չեն, որոնք կարելի է շարժել այսկողմ-այնկողմ որոշակի, նախապես կազմված ծրագրով, այլ խանդավառ մարդկային էակներ, որոնք ընդունակ են ոչ միայն գործելու հանուն բարօրության, այլև ըմբոստանալու նրա դեմ»⁴:

Այսպիսով, աշխարհի փոփոխման հետ փոփոխվում է և մոտեցումը ժողովրդավարությանը՝ այդ թվում և հայեցակարգային մակարդակում: Սակայն այդ մոդելների ուսումնասիրումը, մեր կարծիքով, շատ կարևոր փուլ է մշակութային և ազգային առանձնահատկությունների հաշվառումով հայ հասարակության ժողովրդավարացման սեփական ռազմավարության ձևավորման գործընթացում:

3. С. Токмаджян - Процессы институциональной демократизации в Армении. - В статье рассматриваются особенности процессов институциональной демократизации в контексте сложных процессов трансформации общественных отношений. Развитие демократии представлено через развитие социальной структуры, то есть как исторический процесс становления, развития и совершенствования социальных институтов. Автор представляет процессы демократизации, с одной стороны, как регулируемые, с другой стороны - как спонтанные.

⁴ *Shiu Дж. Х. Хэллоуэлл, Моральные основы демократии. М., 1993, тp 85:*